Լ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ, Հայ գրական քննադատությունը XIX դարի 70—80-ական թվականներին, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979, 349 էջ։

XIX դարի հայ գրաքննադատության պատմության հարցերը հետաքրքրել են ոչ թիչ թվով գրականագետների ու պատմաբանների, այդ թեմային անդրադարձել են Լեոն, Ա. Ջոպանյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Տիրտերյանը, Ա. Կարինյանը, Վ. Ռշտունին, Մ. Ներսիսյանը, Գ. Ստեփանյանը, Ս. Սարինյանը և ուրիշներ։ Նրանք, սակայն, թիչ են խոսել քննադատության պատմական նշանակության, ինչպես նաև առանձին քննադատների խազացած դերի մասին ընդհանուր շրջայում։ Իրողություն է, որ 70—80-ական թվականների տեսական միտքն ամփոփող ամբողջական աշխատություն մինչ այժմ չի գրվել։ Դրականագետ Լ. Ասմարյանը առաջինն է, որ ձեռնամուխ է եղել նման աշխատության ստեղծման շնորհակալ գործին։ Հենվելով իր նախորդների հետազոտական փորձի վրա, նա հիմնովին ուսումնասիրել է 70—80-ական թվականների հայ գրաքննադատությունը և հանդես եկել մի ծավալուն մենագրությամբ, որը հագեցված է հարուստ փաստերով և թարմ եզրահանգումներով։

Գրքի սկզբում հակիրճ բնութագրվում են XIX դ. հայ քննադատական միտքը, նրա անցած երեք փուլերը, սերտ աղերսներ ստեղծվում դրանց միջև, որոշվում է գրական հրապարակախոսության խաղացած դերը գրականության զարգացման մեջ, նշվում առանձնահատկությունները ու միտումները, համոզիչ է դարձվում այն միտքը, որ 70—80-ական թվականների հայ քննադատությունը նախորդի (1800—1869) համեմատությամբ զգալիորեն հատունացել ու բյուրեղացել էր։ Շարունակելով առաջին փուլի ավանդույթները, քննադատությունն այս շրջանում այլի ընկավ մի շարք առանձնահատուկ գծերով։ Ստեղծվել էր քննադատների մի նոր սերունդ, որի շարքերում էին Գր. Արծրունին, Բաֆֆին, Հ. Պարոնյանը, Մ. Մամուրյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Ա. Արփիարյանը, Շիրվանզադեն, Ստ. Պալասանյանը, Լեոն, Մ. Աբեղյանը և ուրիշներ։ Նրանք ավելի հանգամանորեն էին անդրադառնում գրականության ու կյանքի փոխհարաբերության, նրա հասարակական դերի ու նշանակության հարցերին, մեծապես հենվում էին գիտական գանազան դիսցիպլինների, գիտության նվաճումների վրա՝ վերացնելով գիտության և գրականության սահմանները։ Դրա հետ մեկտեղ քննվում էին նաև գրականության գեղարվեստական յուրահատկության պրոբլեմները (լեզու, ոճ. թեմա, մեթոդ, կառուցվածք), տեղ էր հատկացվում գրականագիտական-տեսական հարցերին։ Ժամանակի մամուլի («Մշակ», «Փորձ», «Արձագանք», «Մուրճ», «Մասիս», «Մեղու Հայաստանի», «Արևելյան մամուլ» և այլն) էջերում լույս էին տեսնում ընդհանրացնող նյութեր, որոնք մատուցվում էին ժանրային տարբեր ձևերով ու միջոցներով։ Զգացվում էր միտում՝ արձագանքելու ժամանակի հրատապ հուզող հարցերին, գրաքննադատությունը ստանում էր հրապարակախոսական, բանավիճային, մերկացնող բնույթ, արձագանքում լուսավորական, ազգային-ազատագրական շարժմանը, նպաստում առաջավոր գաղափարների պրոպագանդմանը։ Մյուս կողմից, ինչպես նկատված է գրքում, գրական քննադատությունն այդ շրջանում ոչ այնքան գեղագիտական, որքան բարոյագիտական հարցեր էր շոշափում։ Դա, անշուշտ, նախորդ 50—60-ական թվականների ավանդույթն էր՝ թելադրված գրականության մեջ քաղաքացիական ոգու ամրապնդման ցանկությամբ ու պահանջով։ Հայտնում ու ընդարձակվում էր քննադատության հետազոտական շրջանակը, ավելի ու ավելի էր մեծանում հետաքրքրությունը ռուսական առաջավոր մտքի նկատմամբ, հայ մտավորականները ոգեշնչվում էին Վ. Բելինսկու, Ա. Գերցենի, Ն. Չերնիշևսկու, Ա. Դոբրոլյուբովի, Դ. Պիսարևի աշխատություններով։ Հայ քննադատները, սակայն, չէր կրկնում նրանց, այլ ընթանում էր ազգային ինքնուրույն ճանապարհով, և դա նրա գլխավոր արժանիքն էր։

Գրախոսվող աշխատության մեջ ցույց է տրված, որ 70—80-ական թվականների գրաքննադատությունը գաղափարապես միատարր չէր. հասարակական կյանքի բուռն ազդեցու-

թյամբ երևան էին գալիս տարբեր հոսանքների ու խմբակցությունների հակամարտությունները, միմյանց հետ ներքին հակասությունների մեջ էին դեմոկրատները, լիբերալները և պահպանողականները։ Այդ ամենը, անշուշտ, ինչպես նշում է հեղինակը, իր կնիքն էր դնում գաղութացման ոգու գրական զարգացման վրա։

Մենագրության մեջ ընդարձակ գլուխներ են հատկացված «Արևելյան մամուլին», «Մեղու Հայաստանիին», «Մշակի» ծավալած գրաքննադատությանը։ Ըստ ամենայնի գնահատված է Գր. Արծրունու, Ռաֆֆու, Մ. Մամուրյանի, Մտ. Պալասանյանի գրական ժառանգությունը, նրանց խաղացած դերը գրականության զարգացման ասպարեզում։

Գր. Արծրունին և «Մշակը» գրական հարցերը բխեցնում էին հասարակական բուն կյանքից, այստեղից էլ նրանց մտքերը կյանքը ոեալ արտացոլելու, երկի հիմքում հասարակական բովանդակություն դնելու վերաբերյալ։ Գր. Արծրունին գտնում էր, որ հավասարապես պետք է օգտվել ռեալիզմի և ռոմանտիզմի հնարանքներից։ Նա խրախուսում էր ժամանակակից քնարական գրողներին ու դրամատուրգներին (Գ. Սունդուկյան, Ն. Փուղինյան, Մ. Պատկանյան, Մ. Տեր-Գրիգորյան)։ Հստակ պատասխան տալիս գրականագիտական մի շարք հարցերի։ Օրինակ, Գր. Արծրունին տիպը սահմանել է այսպես. «Տիպը գեղարվեստական գրվածքի մեջ անվանվում է մի այնպիսի բնավորություն, որ անհատական անձնավորություն չինելով, մի հայտնի հասարակության մեջ հաճախ պատահող, ժամանակակից կյանքի ծնունդ համարվող, բազմաթիվ անձնավորություններից վերցրած հավարական մի բնավորություն է»[1]։ Ինչպես իրավացիորեն նշում է աշխատության հեղինակը, Գր. Արծրունին իր գրական հրապարակախոսությամբ ձգտում էր «մաքրել հայ իրականությունը հնությունեներից» (էջ 108), եվրոպական և ռուս գրականության փորձը օգտագործում էր երիտասարդության մեջ նոր ճաշակ պատվաստելու, հայ գրականությունը բարձրացնելու համաշխարհային մակարդակի։

Ռաֆֆին իր գործունեությունը սկսել է որպես լուսավորիչ, ապա դարձել է ազատագրական շարժումների երգիչ, դեմոկրատական գաղափարների պաշտպան, արձագանքել դարի գլխավոր իրազարձությունների։ Գրքում նա ներկայացված է իբրև հասարակայնորեն ակտիվ արվեստի, իրականության արտացոլման ներգործուն ձևերի ջատագով։ Գրականագետը ըստ արժանվույն է գնահատում Ռաֆֆու հոդվածները, որոնք հարստացրին հայ գեղագիտական մտքը։ Հատկապես արժեքավոր են Ռաֆֆու հայացքները վեպերի ու պատմավեպերի մասին, որոնք ժողովրդական կյանքի արտացոլումներ են և ազգերի բարոյական ու իմացական կյանքի պատմագրություններ։ Գրականությունը դիտելով որպես կյանքի համակողմանի հայելի, նա խնդիր էր դնում մերկացնել կյանքի տգեղ կողմերը՝ հասարակական դատաստանին ներկայացնելու ակնկալությամբ, նպաստել մաքրելու կյանքը՝ «բարոյական և մտավոր ժանգի վերացմամբ հասնել իրականության բարվոքմանը» (էջ 132)։

Հ. Պարոնյանի մասին խոսելիս հեղինակը մեծ երգիծաբանին բնութագրել է իբրև բացառիկ նուրբ մի գրաքննադատ, որը մարտնչել է ռեալիստական գրականության համար և փաստորեն նախապատրաստել 80-ականների սերնդի երևան գալը։ Նա երազել է մեծ պոեզիայի մասին, զգացել ժամանակի ռոմանտիկական անկյանք պոեզիայից (Ե. Միսաքյան, Տ. Սեթյան), արկածային և ռոմանտիկական վեպերից (Ս. Տյուսար), որոնել ձևի և բովանդակության ներդաշնակություն, քարոզել իբրև բարոյականության դպրոց, պաշտպանել առաջադիմական գրականության մեջ։ Դնելով բնականության պահանջ, Հ. Պարոնյանը, ինչպես ժամանակին գրել է Ա. Տերտերյանը, գրողներին սովորեցնում էր «տալ ոչ թե սոսկ փաստը, այլ փաստի բանաստեղծությունը, այսինքն հանգես է բերել ընդհանրացնելու մեծ ուժ, փաստի մեջ սոցիալական օրինաչափությունը ցույց տալու փիլիսոփայական խորամտություն»[2]։

Քննվող ժամանակաշրջանում մամուլի մյուս օրգաններում («Գործ», «Փորձ», «Արձագանք» և այլն) բարձրացվում էին նոր գրականության զարգացման, գրական մեթոդների փոխադարձ կապի, ժողովրդայնության, ազատագրական պայքարի, հայրենի երկիրը ճանաչելու, արևմտահայ և արևելահայ հատվածների միավորման և այլ հարցեր։ «Գործիս» քննադատությունը հետամուտ էր ժողովրդին ծառայող գրականության ստեղծման նպատակին՝ գրականությունը դիտելով կյանքի հայելի։ «Փորձիս» աշխատակիցները ընդգծում էին ժողովրդական բանահյուսության գանձերը օգտագործելու հույժ կարևորությունը։ Քննադատ և պատմաբան

---

[1] «Մշակ», 1887, № 133։

[2] Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 303։

Ստ. Պալասանյանը գրում էր գրականության և քննադատության կապի, փոխադարձ շփումների, գրական ուղղությունների փոխհարաբերության մասին, նոր կողմերով հարստացնում ռոմանտիզմի և իդեալականի բմբռնումը։

Հայ գրականության զարգացման մեջ առանձնապես կարևոր ավանդ ներդրեց 80-ական թվականների գրաքննադատությունը, որ մի նոր, նշանակալից երևույթ էր։ Ինչպես ցույց է տրված գրախոսվող աշխատության մեջ, այդ շրջանում գնալով ավելի ու ավելի էր խորացվում գրական հարցերի քննությունը, հարստացվում դրանց վերաբերյալ ժամանակի բմբռնումները։ Այս իմաստով համակողմանի բնութագրված են Ա. Արփիարյանի քննադատական աշխատությունները, արժեքավորված է նրա պայքարը ռեալիստական գրականության ստեղծման ու ամրապնդման, ժողովրդայնության գաղափարների արմատավորման ուղղությամբ։ Ա. Արփիարյանն առաջինը ողջունեց հայ ռեալիստական արձակի երեան գալը Շիրվանզադեի, Զոհրապի, Կամսարականի երկերում, դրանք դիտելով ստրտի հետ խոսող մեծ ազգային վիպասանություն (էջ 266)։ Ա. Արփիարյանի հրապարակախոսական հոդվածներում խորիմաստ կարծիքներ կան գրողի աշխատանքի, կյանքը ճանաչելու կարողության վերաբերյալ։ Գրողը, նկատել է Ա. Արփիարյանը, պետք է լավ ճանաչի կյանքը, իմանա մարդկային սրտի գաղտնիքները, նա պետք է գրականությունը դուրս բերի անձուկ վիճակից, տանի ընդարձակ մայրուղի։

Շիրվանզադեի քննադատական գործունեության մասին խոսելիս, Լ. Ասմարյանը բերում է նրա կարծիքները գրականության մեջ ճշմարտացիության, հոգեբանական համոզչության, սոցիալական և գաղափարական բովանդակության խորացման անհրաժեշտության վերաբերյալ։

Գրքում պատշաճորեն է ներկայացված Մ. Արեղյանի գրական քննադատությունը։ Գրականագետը ընդգծում է այն փաստը, որ Մ. Արեղյանն առաջինն էր, որ իր հոդվածներում բարձր գնահատեց ժողովրդական կյանքն արտացոլելու Հովհաննես Թումանյանի նախաձիրությունը և նրան խորհուրդ տվեց միշտ հարազատ մնալ ժողովրդական կյանքին, աշխատել այն ներկայացնել իր ողջ ճշմարտացիությամբ։

Լ. Ասմարյանի սույն մենագրությունը գրված է դարաշրջանի հասարակական-գրական շարժման իմացությամբ։ Նրանում օգտագործված փաստերի զգալի մասը գրականագետի ջանքերի, անխոնջ պրպտումների արդյունքն է։ 70—80-ական թվականների գրականության հարցերի վերաբերյալ հեղինակի եզրակացությունները հիմնականում անառարկելի են։ Գրքում գլխավորն այն է, որ գրական քննադատությունը չի կտրվում գրականության ընդհանուր զարգացումից այլ քննվում է հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա և բնական կապերի, փոխադարձ ներգործության մեջ։ Հայ քննադատությունը, ինչպես ցույց է տրված գրքում, լիցքավորված ժամանակի առաջավոր գաղափարներով, ակտիվորեն ներգործում էր գրական պրոցեսի վրա, տոգորում բարձր իդեալներով, ազատագրական պայքարի երգանքներով։ Այդ շրջանի գրական քննադատությունը, գրականագետի պատկերավոր արտահայտությամբ, խաղաց հոգատար պարտիզպանի դեր, որը «կոչված էր հեռացնելու մնասակար մոլախոտերը և ըստ պատշաճին պահելու գրականության պատիվը, ապահովելու նրա ծաղկումը» (էջ 348)։

Անշուշտ, գրքում ոչ բոլոր պրոբլեմներն են քննված անհրաժեշտ խորությամբ։ Դա հատկապես վերաբերվում է արևելահայ գրաքննադատության և թատրոնի հարցերի (գլուխ 8) լուսաբանմանը։ Ասենք նաև, որ առանձին մասերում նկատվում է վերլուծության պակաս, նկարագրականություն, «նոր դարի» գործունեությանը, Կ. Տյուրյանի, Ե. Տեմիրճիպաշյանի հայացքներին տրված գնահատականները տեղ-տեղ առարկության տեղիք են տալիս։ Կարելի է նշել նաև այլ թերություններ, բայց դրանք մասնակի բնույթ են կրում։

«Հայ գրական քննադատությունը XIX դարի 70—80-ական թվականներին» աշխատությունը արժեքավոր ներդրում է հայ գրական քննադատական մտքի հետազոտման պատմության մեջ և անշուշտ կնպաստի նրա ավելի և մյուս փուլերի հետագա առավել խոր հետազոտմանը։

ԱՐՍԵՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու